ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնք
Հասցե՝ գ. Ամասիա 26փողոց , 19շենք
հեռախոս /0246/ -223-10
էլ. Փոստ amasia.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունվարի 2017 թվականի թիվ 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթով՝ Ամասիայի համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 30-ի թիվ 1 նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Զրաձոր, Մեղրաշատ, Հովտուն, Ողջի բնակավայրերի վարչական տարածքներում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների գոտավորման, հաստատման, դրույքաչափերի սահմանման և Ամասիայի համայնքի հավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Ամասիյաի համայնքում թափառաշրջիկ շների ոչնչացման համար համայնքի բյուջեից գումար հատկացնելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի վարչական սահմաններում գտնվող, Ախուրյանի աջափնյա ջրանցքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 1.79532 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողամասը ուղղակի վաճառքի ձևով «Անի» բաց բաժնետիրական ընկերությանը օտարելու համաձայնություն տալու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առաջարկություն ներկայացնելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ղեկավարի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործող քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ (10)	դեմ (0)	ձեռնպահ(0)
1. Արտեմ Դավթյան			
2. Մանվել Խոջումյան			
3. Արա Հարությունյան			
4. Սերոբ Ղուկասյան			
5. Կարապետ Մելքոնյան			
6. Արման Միրզոյան			
7. Հայկ Նիկոլյան			
8. Վարդան Պապիկյան			
9. Անդրանիկ Վարդանյան			
10. Ալեքսան Քոչոյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՋԵՄՍԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

<<30 >> հունվարի 2017 թվական

գյուղ Ամասիա